## ՀՀ Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առաջատար մասնագետի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

**1.** ՀՀ. Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-1 /

Առաջատար մասնագետն աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է ֆինանսական փաստաթղթային շրջանառությունը, կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, իրականացնում է դրամական միջոցների մուտքագրման, դուրսգրման , այդ թվում հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները:

Ունի համակարգչի իմացություն և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Առաջատար մասնագետն ունի այլ իրավունքներ և պարտականություններ՝ համաձայն իր պաշտոնի անձնագրի:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա / Միջնակարգ կրթություն

բ / պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

**2.** ՀՀ Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-2/

Առաջատար մասնագետն աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակմանը, մասնակցում է համայնքի հողային հաշվեկշռի կազման աշխատանքներին, լրացնում և տարածքային վիճվարչություն է ներկայացնում ցանքատարածությունների և բերքահավաքի վերաբերյալ փաստաթղթեր, կազմում է հաշվետվություն: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա / Միջնակարգ կրթություն

բ / պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2015թ փետրվարի 23 -ին ժամը 12.00-ին և ժամը 14.00-ին Հայկաշենի գյուղապետարանի շենքում:

Դիմող քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը հանձնելիս /:

-գիտելիքները հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

-Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ-ի մարտի 3-ի N-310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

-Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

-Արական սեռի անձիք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային, տեղամասային կցագրման վկայականի պատճենները:

-Մեկ լուսանկար 3x4 չափսի:

-Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև պաշտոնների անձնագրերին ծանոթանալու համար կարող են դիմել Հայկաշենի գյուղապետարան կամ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե՝ Աբովյան 71, հեռ. 0237 2-07-70 /:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-հց մինչև ժամը 17.00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մինչև 2015թ փետրվարի 9-ը: